

ՎՈՒՆԱԲԱՆ ԴՊՐՈՑ՝

Էռնա Մանեա Շիրինյան

Սույն հոդվածում՝ նպատակ չունենալով հանգամանորեն կանգ առնել հունաբան երկերի առանձնահատկությունների վրա, ուզում եմ ամփոփել և ներկայացնել Հունաբան դպրոցի թարգմանությունների իմ բազմամյա հետազոտությունների որոշ դրույթներ, որոնց իմացությունը թերևս նպաստավոր և օգտակար կլինի Աստվածաբանության ֆակուլտետի ուսանողների համար:

Հունաբան դպրոցը, որը կոչված էր թարգմանություններ կատարել հունարենից, չափազանց մեծ դեր է խաղացել հայ ժողովրդի պատմական, քաղաքական, մշակութային զարգացման գործում: Նույնը կարելի է ասել նաև Ասորաբան դպրոցի վերաբերյալ, որի գործունեության շնորհիվ, համապատասխանաբար ասորերենից թարգմանված բազում գործերով է հարստացել մեր գրականությունը: Հունաբան դպրոցի երևույթն այլուր գործող նմանատիպ դպրոցների հետ համեմատելիս աչքի է զարնում այն հանգամանքը, որ մեզանում արված ա.) թարգմանությունների թիվը բավականին մեծ է, բ.) դրանք տարաբնույթ են՝ թեև ունեցել են հատուկ ուղղվածություն (ինչպես կոեսնենք ստորև), գ.) թարգմանությունները կատարվել են տարբեր լեզուներով՝ սկզբնական շրջանում՝ հունարենից և ասորերենից (որքանով որ մեզ հայտնի է ցայսօր), իսկ հետագայում նաև այլ լեզուներով:

Հայկական և հունական աղբյուրների աղերսները լավագույնս բացահայտվում են թարգմանական գրականության մեջ: Թարգմանչական գործունեությունը Հայաստանում ծավալվեց հայ գրերի ստեղծմանը զուգահեռ՝ հայ գրականության կազմավորման և զարգացման արշալույսին:² Առաջին թարգմանված երկն Աստվածաշունչն էր, որն էլ դարձավ հայե-

* Հոդվածը ներկայացվել է 25.01.2020 թ., գրախոսվել է 15.02.2020թ., ընդունվել է տպագրության 30.03.2020 թ.:

¹ Հոդվածը հրատարակվում է «Դրուագներ հայ աստուածաբանական մտքի պատմությունից» թեմայի շրջանակում՝ 18T-6D342 ծածկագրով:

² Հայկական մատենագիտությանը նվիրված հիմնական աշխատություններից կարելի է նշել Գ. Զարպիանալեան, Հայկական մատենագիտություն, Վենետիկ, 1883, Գ. Զարպ-

րեն լեզվով առաջին գրվածքը: 5-րդ դ. ընթացքում բավականաչափ թարգմանություններ արվեցին մասնավորապես հունարենից և ասորերենից, քանզի Հայաստանը քրիստոնեական դարաշրջանի սկզբից ի վեր հունա-ասորական մշակութային աշխարհի կարևոր և գործուն մասնակիցն էր: Իր աշխարհագրական դիրքի հետևանքով, Հայաստանը, ինչպես և հյուսիսից ու արևմուտքից նրան շրջապատող երկրները, փոխադրում էին միմյանց մշակույթների վրա: Հայաստանը դարձել էր յուրօրինակ մի վայր, ուր տեսանելի էր այդ մշակույթների միաձուլումը:

Սակայն հենց նույն այդ աշխարհագրական դիրքի պատճառով բազում խնդիրներ էին ծառայել Հայաստանի առջև: Հայաստանի քաղաքական բաժանումը Սասանյան Պարսկաստանի և Բյուզանդիայի կայսրությունների միջև, անտարակույս, իր հետքը թողեց քաղաքական, հասարակական և մշակութային ոլորտների վրա: Բյուզանդիայի ներգործությունը չէր սահմանափակվում Փոքր Հայքով, որն անմիջապես գտնվում էր վերջինիս իշխանության ներքո. այն տարածվում էր նաև Մեծ Հայքի կենտրոնական շրջանների վրա: 5-րդ դ. սկզբին, Հայաստանը, կորցնելով իր քաղաքական ինքնուրույնությունը, մշակութային առումով, այնուամենայնիվ, բավականին անկախ էր, ինչը պայմանավորված էր հայկական գրերի գյուտով: 451 թ. կայացած Քաղկեդոնի ժողովից հետո հայկական հակաքաղկեդոնական և բյուզանդական քաղկեդոնական եկեղեցիների արդեն նշմարվող տարանջատումն աստիճանաբար էլ ավելի խորացավ¹:

Թարգմանչական գործը Հայաստանում դարձավ թերևս եկեղեցու կողմից մշակված ծրագրի մի մաս, որի գլխավոր նպատակն էր պահպանել մշակութային, դավանաբանական, և, ի վերջո, նաև քաղաքական անկախությունը: Հետաքրքրական է այս մասին Լ. Տեր-Պետրոսյանի հետևյալ նշումը.

հանալեան, Մատենադարան հայերէն թարգմանութեանց նախնեաց, Վենետիկ, 1889, Հ. Անայան, Հայկական Մատենագիտություն, Երևան 1959, հտ. Ա, Բ, R. W. Thomson, A Bibliography of Classical Armenian Literature to 1500 A. D. (Corpus Christianorum), Turnhout: Brepols, 1995.

¹ **K. Sarkissian.** The Council of Chalcedon and the Armenian Church, London, 1965, N. G. Garsoïan, Quelques précisions préliminaires sur le schisme entre les Églises byzantine et arménienne au sujet du concile de Chalcedoine: II La date et les circonstances de la rupture, "L'Arménie et Byzance: Histoire et culture (Paris 1996), pp. 99-112.

«Պատմամշակութային տեսակետից թարգմանական և ինքնուրույն երկերի զանազանումը սոսկ պայմանական նշանակություն ունի, քանի որ թե՛ բովանդակության և թե՛ ձևի առումով նրանք ներկայացնում են միասնական գրական իրողության հավասարաթեք կողմերը¹»:

Իսկ ինչպիսի՞ գրքեր էին ընտրում հայերը թարգմանության համար և ինչո՞ւ էին նրանց հետաքրքրում հենց այդ գրվածքները: Դա լավագույնս ներկայացված է 11-12-րդ դդ. հեղինակ՝ «մեծ իմաստասեր, այր հրաշալի, մեծ հոետոր, վէմ ադամանդեայ ընդդէմ հերծուածողաց» Պողոս Տարոնացու *Թուղթ ընդդէմ Թէոփիստէ հոռոմ փիլիսոփային* երկի *Ջապագովութիւն Հայոց* հատվածում.

«Ասէք թէ Հայք ի Հոռոմոց գիրս թարգմանեն եւ ուսանին, եւ այդ ձեզ չէ՛ պատիւ: Ջարէ՛սս եւ զմարգարէս ամենայն ազգք ի Հրէից թարգմանեցին, եւ նոքա ահա ի խաւարի մուրեալ են: Բազում գիրք կան ի Հայք, եւ Հոռոմք ոչ թարգմանեն վասն ծուլութեան եւ հպարտութեան: Մեր յԱսորոց եւ յԵգիպտացոց², ի Հոռոմոց եւ ի Յունաց թարգմանենք զսուրբ հարցն գիրսն, եւ զճառս սրբոց վկայիցն: Նաեւ բազումս ի հերծուածողացն, որ հաւասար [=միաբան] են ուղղափառաց: Զի սուրբն Աթանաս ասէ. թէ

¹ **Լ. Տեր-Պետրոսյան**, Փորձ հայ հին և միջնադարյան թարգմանական գրականության պարբերացման, Էջմիածին, 1982, թ. 4, էջ 45:

² «յԵգիպտացոց» բառը, եթե այն ընկալվի որպես լեզվի կրողների մատնանշում, այստեղ զարմանալի է և համաձայն դրան պետք է ենթադրել, որ մեզանում առկա են եղել նաև թարգմանություններ դպտերենից, սակայն նման տեղեկություն մենք չունենք: Այս «տեղի»-ի վերաբերյալ կարելի է ևս երեք ենթադրություն անել՝ 1) հասկանալ որպես «Եգիպտացի սուրբ հայրերի գրքերը», այսինքն այն հայրերի, որոնք ապրել կամ որոշ ժամանակ գործել են Եգիպտոսում: 2) Հավանաբար, կարելի է ենթադրել նաև, որ բառն այստեղ օգտագործվում է Աղեքսանդրյան առաջին դպրոցի ներկայացուցիչների վերաբերյալ, որոնց որոշակի երկերը թարգմանված էին հայերեն (օրինակ՝ Գրիգոր Մագիստրոսի տեղեկությունը Կալիմաքոսի աշխատությունների մասին): 3) Հնարավոր է ենթադրել, որ «յԵգիպտացոց»-ը վերաբերում է Փիլոն Աղեքսանդրացու գրվածքներին, որոնք, իհարկե, նույնպես չէին կարող դասվել «սուրբ հարանց» գրքերի շարքում: Ինչ վերաբերում է «ի Հոռոմոց եւ ի Յունաց»՝ պարզ է, որ այստեղ Պողոս Տարոնացին նկատի ունի ոչ միայն հունարենը, այլև լատիներենը, որից թարգմանություններ կատարելն այդ ժամանակ արդեն ավանդված է:

բազում իրաք հերձուածողքն ընդ մեզ խոստովանին,
զոր պարտ է ընդունել:

Ի ծովու մարգարիտ՝ ծովն աղտաղտուկ եւ խաւար, յափափայից՝
ակունք մեծագինք, ի հողոյ՝ ոսկի, ի քարանց՝ ջուր: Փողք եւ
երգարանք զայլս զուարճացուցանեն, եւ ինքեանք ոչ աւգտին,
նոյնպէս եւ դուք: Տերեւ՝ այգոյ եւ ծառոյ զպտուղսն սնուցանէ,
զպտուղն առնուն՝ տերեւն անպէտ: Զգինին ի հնձանէն առնուն,
զփոճոքն ձգեն: Գինի եւ մրուր ի մի կարաս է, զգինին առնուն
յուրախութիւն, զմրուրն ի բաց հանեն: Նաեւ ի հաւտից կաթանէ
զմազ եւ զսպտուր քամելով պարզեն: Նոյնպէս ի գազանաց եւ ի
սողնոց թինաւորաց, եւ ի զազիր զեռնոց, ճարտարք յոլով դեղս
կազմեն: Այսպէս եւ Հայք յամենայն վատթարաց հաւաքեն
զպիտանին, եւ զխտանն մերժեն¹»:

Թարգմանության գործընթացի և բարդությունների մասին է հաղորդում նաև Կիրակոս Դրագարկցին իր գրվածքի հիշատակարանում.

«...յիշեցէք զամենատրուպ եւ բազմամեղս զԿիրակոսս, որ
բազում աշխատեցայ ի սայ, սակս անյարմար եւ խրթնի թարգմանութեան
հոետորին յունականի, որ եւ ջանացի յերիւրել միայն ո՛չ
յաւելով եւ ո՛չ պակասեցուցանել յԱստուածաշունչ բանիցն:
Իսկ եթէ ի վեր գոլով սորայս մակացութիւն, քան զմերս
տեսութիւն, եւ պակաս ինչ կամ այլատարազ եղեւ, աղաչեմ չլինել
մեղադիր, զայս գիտելով թէ ո՛չ ի ծուլութենէ կամ յանփոյթ
առնելոյ եղեւ, այլ յանհաւասարութենէ (կամ յանհասութենէ)
հատակոտոր թարգմանելոյն: Բայց, ըստ իս, ո՛չ ինչ
պակասեցուցեալ ի ճշմարտութենէ²»:

¹ **Նորայր Եպս. Պողարեան.** Հայ գրողներ, Երուսաղէմ, 1971, էջ 208-209: Հատվածը մեջբերում են Պողարյանի *Հայ գրողներ* գրքից, ուր հեղինակը նշում է, որ *Թուրթ Ընդդէմ Թէոփիստէ Հոռոմ Փիլիսոփայի* (այսպէս յօրինակին) պահպանվել է նաև ձեռ. Ս. Յ. Թ. 1272, որը «կը պարունակէ հետաքրքրական հատուածներ, որոնք չկան տպուածին մէջ» (Նորայր Եպս. Պողարեան. Հայ գրողներ, Երուսաղէմ 1971, էջ 207): Սույն հատվածը դրանցից մեկն է:

² **Կիրակոս Դրագարկցու Մեկնութիւն Յովհաննու Աւետարանին, Յ. Ոսկեբերանի,** Կ. Պոլիս, 1717, էջ 962:

Հայաստանում «հունասիրության» սկիզբը դրեցին հայկական այբուբենի հիմնադիրներ Սահակ Պարթևը և Մեսրոպ Մաշտոցը: Նրանք ուսանողներ ուղարկեցին ժամանակի հայտնի ասորական ու հունական մշակութային կենտրոններ՝ Ուռհա (Եդեսիա), Աղեքսանդրիա և Բյուզանդիոն¹, ուսումնասիրելու այնտեղ դասավանդվող գիտությունները և Հայաստան բերելու ժամանակի գիտական նորույթները:

Թարգմանչական բուռն գործունեության շնորհիվ հայկական միջավայր ներմուծվեցին գիտության բազմաթիվ ձեռքբերումները: Աստվածաբանական, փիլիսոփայական և դոքսոգրաֆիկ գրքերի հայերեն թարգմանությունների քննությունն ակներև է դարձնում, որ այդ երկերի ընտրության համար գործում էր հստակ կանոն²: Թարգմանության համար ընտրվում էին այն աշխատությունները, որոնք, հիմնականում, ներկայացնում էին վաղ քրիստոնեական միտքը և հունական քրիստոնեական պլատոնիզմն ու արիստոտելիզմը: Նման ընտրության նպատակն էր, առաջին հերթին, հայերեն լեզվի միջոցով մատչելի դարձնել աստվածաբանական և փիլիսոփայական երկերը և հայերենով սահմանել դրանցում եղած մասնագիտական եզրերը: Թարգմանիչների աշխատասիրությամբ հայացվեցին Պլատոնի, Արիստոտելի, ինչպես նաև մեկնիչների ու փիլիսոփա-աստվածաբանների (օրինակ, Փիլոն Աղեքսանդրացու, Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նյուսացու, Գրիգոր Սքանչելագործի, Տիմոթեոս Կուզի, Իրենեոս Լուզուրնացու, Եվագրիոս Պոնտացու, Սոկրատ Սքոլաստիկոսի, Կյուրեղ Աղեքսանդրացու և այլոց) երկերը:

Աստվածաշնչից հետո, վաղ թարգմանություններին զուգահեռ, մե-

¹ Երևի թե Աթենքն էլ կարելի է դասել այդ կենտրոնների շարքում, թեև այն որպես այդպիսին հիշատակված չէ Խորենացու երկում: Սակայն բազում այլ աղբյուրներում Աթենքն ակնարկվում է որպես հայ ուսանողների ուսուցանելու վայր. օրինակ՝ Վանական Վարդապետի տեղեկությունն առ այն, որ Դավիթ Անհաղթը սովորել է Աթենքում (տե՛ս, Է. Մ. Շիրինյան, Քրիստոնեական վարդապետության անտիկ և հեյլենիստական տարրերը. հայկական և հունական՝ դասական և բյուզանդական, աղբյուրների բաղդատությամբ, Երևան, 2005, էջ 104-105):

² Հայկական եկեղեցու կողմից ընդունված հեղինակների և երկերի կանոնի առկայությունը վկայված է բազում աղբյուրներում, օրինակ՝ Սամվել Կամրջաձորեցու «Սինք հաւատոյ»-ի ցանկում թվարկված, Հայոց եկեղեցու համար ընդունելի հեղինակները (Գիրք թղթոց, երկրորդ հրատարակութիւն, Ն. եպս. Պողարեան, Երուսաղէմ, 1994, էջ 555-556):

զանում թարգմանվել են նաև ծիսական երկեր, որոնց նպատակն էր ապահովել եկեղեցական արարողությունների կատարումը մայրենի լեզվով: Դրանցից գրեթե անմիջապես հետո սկսվեցին թարգմանվել նաև եկեղեցական երկերը: Ի լրումն եկեղեցական գրվածքների, փոխադրվեցին նաև հանրահայտ հայրաբանական որոշ գործեր: Այսպիսով, հունական և ասորական հեղինակների զանազան գրվածքները հարստացրեցին հայ թարգմանական գրականությունը և մշակույթը:

Թարգմանական աշխատանքները, հիմնականում, կատարվում էին երկու եղանակով. իմաստային, այսպես կոչված, *sensus de sensu*, և բանացի՝ *verbum e verbo*: Առաջին եղանակով արված հայկական վաղ դասական թարգմանություններին բնորոշ է հարաբերական ազատություն (նաև լեզվաբանական իմաստով): Աստվածաշնչի թարգմանության դեպքում այդ ազատությունը սահմանափակված էր սուրբ տեքստի նկատմամբ հատուկ մոտեցմամբ, որը պահանջում էր հնարավորինս ճշգրիտ փոխադրում: Իմաստային թարգմանությունների դեպքում հայոց լեզուն կրում էր հունարենի համեմատաբար թույլ ազդեցությունը¹:

Հատկանշական է, որ ոչ միայն թարգմանություններում, այլև հայ ինքնուրույն մատենագրության մեջ հունաբանությունների օրինակները բավականին շատ են: Հիշենք վերն արծարծված հանգամանքը, որ հայ հեղինակներն իրենց երկերում հունաբանություններ ու զուգահեռ եզրեր ներմուծելով, ենթարկվում էին հունարեն թարգմանությունների (օրինակ, Փիլոնի երկերի) ներգործությանը. մինչև հայ գրերի գյուտը հունարենը ամենաօգտագործելի լեզուն էր, և պարզ է, որ հայերենը, այսպես թե այնպես, պետք է կրեր նրա ազդեցությունը: Սակայն թվում է, որ այդ փուլում ինչպես թարգմանություններում, այնպես էլ ինքնուրույն մատենագրության մեջ ներմուծված հունաբանությունները ոչ թե միտումնավոր էին, այլ «սկամայից»՝ հայերենում այս կամ այն բացակայող տերմինը փոխանցելու նպատակով:

Ի տարբերություն առաջին թարգմանական եղանակի, նախահունաբան² և հունաբան թարգմանությունները, հիմնականում, առնչվում էին

¹ **M. E. Shirinian**, Translations from Greek in Armenian Literature. - Eikasmos, XII/2001, Bologna, pp. 229-234.

² **G. Lafontaine, B. Coulie**, La version arménienne des discours Grégoire de Nazianze. CSCO: vol. 96, Louvaine 1983, p. 137.

գիտական գրականության հետ, որտեղ տեխնիկական տերմինները չափազանց շատ էին և հունաբանությունների կարիքն է՛լ ավելի էր զգացվում: Հետդասական¹, միջանկյալ՝ նախահունաբան թարգմանությունների խումբը ներառում է հայրաբանական, մեկնողական, կանոնագիտական բնույթի որոշ գրվածքներ: Նախահունաբան եղանակով կատարված թարգմանությունների լեզուն հազեցած էր հունաբանություններով, սակայն դեռևս արհեստական չէր: Այս խմբի թարգմանությունները, ի հակադրություն հունաբան եղանակով կատարված վերարտադրությունների, հիմք չեն տալիս խոսելու որևէ ծրագրի գոյության օգտին: Պարզապես, ելնելով գիտական նյութի յուրահատկություններից, հեղինակները ստիպված էին առավել մեծ քանակով բառեր պատճենել բնագրում առկա բազմաթիվ եզրերը փոխանցելու համար, քանզի հայերենում բացակայող տերմինները շատ-շատ էին:

Հունաբան թարգմանությունները չափազանց բառացի էին փոխանցում հունական տեքստը, շարահյուսական դարձվածները և անգամ քերականական ձևերը: Այդպիսի նյութական վերարտադրությունների հետևանքով ստեղծվեց մի արհեստական լեզու՝ հաճախ անհասկանալի առանց հունարեն բնագրի: Բառացի թարգմանությունները զարգացում ապրեցին 5-րդ դ. վերջին: Հայկական իրականության մեջ յուրահատուկ այդ ոճն ընդունված է անվանել հունաբան, իսկ այդ ոճով աշխատող թարգմանիչների գործունեությունը՝ Հունաբան կամ Հելլենասեր դպրոց: Այս անվանումը պատահական չէ, քանզի, իրոք, հունաբան թարգմանիչների աշխատանքներում առկա են «դպրոցի» բոլոր նախադրյալները և բաղադրիչները:

Հունաբան դպրոցի վերաբերյալ գրականությունն ու ուսումնասիրությունները բավականաչափ հարուստ են ներկայացված: ² 19-րդ դ. վերջում

¹ Նախահունաբան թարգմանությունները անվանում են նաև «արծաթե դարի» կամ «հետմեսրոպյան» թարգմանություններ:

² Հունաբան դպրոցի աղբյուրների ուսումնասիրման գործում կարևոր տեղ են զբաղեցնում, առաջին հերթին, Հ. Մանանդյանի (Յ. Մանանդեան, Յունաբան դպրոցը և նրա զարգացման շրջանները, Վիեննա, 1928), Հ. Լևիի (H. Lewy, *The Pseudo-Philonian De Jona*, London, 1936), Ջ. Բոլոնյեզիի (G. Bolognesi, *La traduzione armena dei progymnasmata di Elio Teone*. - *Accademia nazionale dei Lincei. Rendiconti della classe di scienze morali, storiche e filologiche*, vol. 17, fasc. 3-4, 1962; G. Bolognesi, *Nuovi contributi allo studio del testo armeno dei progymnasmata di Elio Teone*. - *Atheneum*.

շնորհիվ Ֆ. Կոնիբիլի այդ թարգմանությունների նկատմամբ մեծ հետաքրքրություն առաջացավ: Հունարան դպրոցի գործունեությունը հատկապես հետաքրքրեց գերմանացի մասնագետներին (օրինակ, Է. Պրոյշենին¹), և է՛լ ավելի խորը ուսումնասիրվեց հայ գիտնականների կողմից²:

Nuova ser., vol. 47, 1969, pp. 32-38; G. Bolognesi, La tradizione manoscritta del "Yalags cartasanakan krt'owt'eanc" alla luce di uno nuovo documento. - HA, 1976, pp. 319-338), Ա. Մուրադյանի (Ա. Մուրադյան, Հունարան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական եզրաբանության ստեղծման գործում, Երևան, 1971), Շ. Մերսյեի (Ch. Mercier, L'ncole hellénistique dans la littérature arménienne. - REArm, t. XIII, 1978-79, pp. 59-75), Գ. Ուլուհյանի (G. Uluhogian, Technica della traduzione, particolarita lessicale, calchi sintattici della versione armena dell' Asceticon di Sancto Basilio. - HA, Wien, 1975, N10-12, pp. 406-422, Գ. Ուլուհյան, «Տեանն ասելով». Հունարենի բացարձակ սեռականի թարգմանությունը Բարսեղ Կեսարացու հայերեն բնագրում, ՊԲՀ 1989, N1 (124) էջ 167-176), Ա. Տերյանի (A. Terian, Philonis Alexandrini De Animalibus. The Armenian Text with an Introduction, Translation and Commentary, Michigan, Ann Arbor, 1981, A. Terian, The Hellenizing School. its Time, Place and Scope of Activities Reconsidered. - Dumbarton Oaks Papers Symposium. East of Byzantium: Syria nad Armenia in the Formative Period, Washington 1982, pp. 175-197); Ս. Արևշատյանի (С. Арешатян, Трактат Зенона Стоика «О природе» и его древнеармянский перевод, ԲՄ, N3, 1956, 321-322, Ս. Ս. Արևշատյան, Դավիթ Անհաղթ. Վերլուծութիւն «Ներածութեանն» Պորփիրի, Երևան 1976), Յ. Ս. Ս. Վայտենբերգի (J. Weitenberg, "Linguistic Continuity in Armenian Hellenizing Texts", *Le Muséon*, t. 110, fasc. 3-4, 1997, pp. 447-458; J. Weitenberg, "Hellenophile Syntactic Elements in Armenian Texts", *SLOVO*, Volume 26-27: *Actes du Sixième Colloque international de Linguistique arménienne (5-9 juillet 1999)*, INALCO, 2001-2002, pp. 64-72) և այլոց հետազոտությունները:

¹ E. Preuschen, Theologische Literaturzeitung 27 (1902), SS. 207-210.

² Հ. Մանանդյան (1928), Ս. Արևշատյան (Арешатян, 1956, 321-322, Արևշատյան, 1976), Ա. Մուրադյան (1971), Լ. Տեր-Պետրոսյան, (1982), Մ. Շիրինյան (Սոկրատ Սքոլաստիկոսի «Եկեղեցական Պատմության» հայերեն թարգմանության դերը հունարեն բնագրի վերականգման գործում. Երիտասարդ արևելագետների VIII-րդ գիտական նստաշրջան (Աղվերան), հունիս 10-12, 1982, էջ 24-25, Երևան, Մ. Ширинян, Краткая редакция древнеармянского перевода Церковной истории Сократа Схоластика [The Concise Version of the old-Armenian Translations of Socrates Scholasticus' *Ecclesiastical History*] - Vizantijkij Vremennik 43 (1982), pp. 231-241, Moscow; M. Shirinian, "Ricerche sulla Storia Ecclesiastica di Socrate Scolastico e sulle sue Versioni Armene". - Annali di Ca'Foscari, XXXIII, 3, 1994, (Serie orientale 25) ; Գ. Մուրադյան ("Le style hellénisant des Progymnasmata arméniens dans le contexte d'autres écrits originaux," *Actes du Sixième Colloque international de Linguistique arménienne (INALCO* –

Առանձնահատուկ է Իտալիայի հայագետների դպրոցի ներդրումը: Զ. Բոլոնյեզիի, Գ. Ուլուիոջանի և հ. Լ. Ջեքիյանի ջանքերով Իտալիայում այսօր կան հունաբան թարգմանություններով զբաղվող մեծ թվով հետազոտողներ, որոնց աշխատասիրությամբ այդ թարգմանությունները միջազգային ճանաչում են ստանում: Ոչ-հայագետ մասնագետների ուշադրությունը հունաբան տեքստերի նկատմամբ զգալիորեն աճեց վերջին տասնամյակների ընթացքում: Այսօր արդեն կան շատ գիտնականներ, որոնք մեծապես արժևորում են հայերեն թարգմանությունների նշանակությունը և նման մի քննական հրատարակության գրախոսականն անգամ անվանում են «Հայկական ճշմարտություն»¹: Այս տեսակետից հարկ է հիշատակել Մ. Մորանիի, Զ. Բոլոնյեզիի², Ա. Տեսսյեի³ և Գ. Խ. Հանսենի աշխատությունները, հատկապես Նեմեսիոսի⁴ և Սոկրատ Սքոլաստիկո-

Académie des Inscriptions et Belles-Lettres – 5-9 juillet 1999), *Slovo*, vol. 26-27 (2001-2002), pp. 83-94; "Pre-hellenizing Translations," in *Bnagirk. Yisatakac. - Documenta memoriae; Dall'Italia e dall'Armenia Studi in onore di Gabriella Uluhogian*, Bologna, 2004, pp. 297-315; «Դավիթ Անհաղթի «Վերլուծութիւն ի Ներածութիւնն Պորփիրի» երկը. տեքստաբանական հարցեր», *Բանբեր Մարենադարանի*, 18, 2008, էջ 19-39; "The Hellenizing School", *Armenian Philology in the Modern Era, From Manuscript to Digital Text*, Edited by Valentina Calzolari, University of Geneva. With the Collaboration of Michael E. Stone (Handbook of Oriental Studies. Section 8 Uralic & Central Asian Studies, Volume 23/1), Leiden & Boston, Brill, 2014, pp. 321-348); Շիրինյան, Քրիստոնեական վարդապետություն անտիկ և հելլենիստական տարրերը և այլն:

¹ Տե՛ս Սոկրատ Սքոլաստիկոսի քննական հրատարակության վերաբերյալ գրախոսականը՝ T. Barnes, *Armeniaca Veritas, Journal of Ecclesiastical History*, vol. 48, No. 4, 1997, Cambridge 1997, pp. 723-73:

² **M. Patillon, G. Bolognesi, Aelius Thnon**, *Progymnasmata* (Collection des Universitns de France, Snrie grecque, 374; Paris: Les Belles Lettres, 1997.

³ **A. Tessier**, Some Remarks about the Armenian Translations of Aristotle, *Proceedings of the World Congress on Aristotle* (Thessaloniki, August 7-14, 1978), Athens: 1982, pp. 94-97; A. Tessier, Some remarks about the Arnenian Tradition of Greek Texts, *Medieval Armenian Culture*, ed. Th. J. Samuelian, (Armenian Texts and Studies 4), University of Pennsylvania, 1984, pp. 415-424.

⁴ **M. Morani**, *Contributio per un'edizione critica della versione armena di Nemesio* (Memorie dell'Istituto Lombardo-Accademia di Scienze e Lettere; Classe di Lettere- Scienze Morali e Storiche Vol. 33 Fasc. 3; Milano: Istituto Lombardo di Scienze e Lettere, 1973; M. Morani, *Le tradizione manoscritta del "De natura hominis" di Nemesio* (Publicazioni della Universita Cattolica del Sacro Cuore-Scienze filologiche e Letteratura, 18; Milano: Vita e Pensiero,

սի «Եկեղեցական պատմության»¹ քննական բնագրերի հրապարակումները, որոնցում լայնորեն օգտագործված է հայերեն հունարան թարգմանությունը:

Քննարկվող հարցի հետագա ուսումնասիրությանը նպաստել է նաև Յ. Վայտենբերգի հունարան թարգմանություն ունեցող երկերի համաբարբառների ստեղծման ծրագիրը². այդ համաբարբառները թույլ կտան որոշ չափով պարզաբանել պարբերացման, հեղինակային պատկանելության և բազմաթիվ այլ խնդիրներ:

Հունարան դպրոցի վերաբերյալ բավական մեծ թվով կատարված այս ուսումնասիրությունները և հրատարակությունները, այնուամենայնիվ չեն սպառում բազում անպատասխան մնացած հարցերը, կան խնդիրներ, որոնք դեռևս լիարժեք չեն ուսումնասիրված՝ լավագույն դեպքում, միայն ակնարկված են: Այդ հարցերից են.

1. Այլ վայրերում գործող Հունարան դպրոցի նախօրինակների, ինչպես նաև Ասորիքում նման բառացի թարգմանությունների տարածվածության վերաբերյալ մեզանում գրեթե չկան համեմատական ուսումնասիրություններ: Բացակայում են այդ երևույթների ընդհանրությունները և տարբերությունները քննարկող աշխատություններ:
2. Հայագիտության մեջ քիչ է խոսվել Հունարան դպրոցի ծագմանը նպաստած պատճառների մասին:
3. Բացահայտված չեն նաև դպրոցի գործունեությունը պայմանավորող ծրագրի գոյությունը հաստատող կոմպանները. բացի մի քանի հակիրճ անդրադարձներից³, մեզանում չկա հարցի վերաբերյալ և ոչ մի հա-

1981); M. Morani, Nemesius. De Natura Hominis, BSB B. G. Teubner Verlagsgesellschaft 1987.

¹ G. Ch. Hansen, M. Shirinian, *Sokrates Kirchengeschichte*, Berlin: Akademie Verlag 1995.

² Օրինակ՝ J. J. S. Weitenberg, *Parallel Aligned Text and Bilingual Concordance of the Armenian and Greek Versions of the Book of Jonah*, Dutch studies in Armenian Language and Literature 1 (Series edited by J. J. S. Weitenberg and Th. van Lint, Amsterdam-Atlanta, GA 1992; R. W. Thomson, *Indices to the Armenian Version of Pseudo-Dionysius the Areopagite*, Dutch studies in Armenian Language and Literature 1 (Series edited by J. J. S. Weitenberg and Th. van Lint, Amsterdam-Atlanta, GA 1997) .

³ Տե՛ս օրինակ. F. N. Finck, *Die armenische Literatur*. - Die orientalische Literaturen, E. Schmidt, A. Erman, Berlin-Leipzig, 1906, S. 285. *Finck F. N.* Geschichte der armenischen

տուկ ուսումնասիրություն:

4. Սահմանափակ են մասնագետների պարզաբանումները Հունաբան դպրոցի որդեգրած մեթոդի ընտրության հանգամանքների մասին:
5. Դեռևս պարզված չեն բազմաթիվ հունաբան թարգմանությունների կատարման ժամանակն ու թարգմանիչների անունները: Հունաբան հուշարձանների ստեղծման ժամանակը ճշտելու համար նպաստավոր կլինի բոլոր այդ թարգմանությունների համաբարբառների կազմումը, ինչն արդեն նախաձեռնված է¹: Համաբարբառների տվյալները թույլ կտան բաղդատելու հունաբան երկերի բառամթերքը և, ըստ օգտագործած եզրերի, որոշել դրանց փոխկախվածությունը, ինչպես նաև այս կամ այն տերմինի առաջին կիրառման ժամանակը: Շատ ավելի բարդ է պարզել հեղինակային պատկանելության խնդիրները, քանզի հայտնի է, որ Հունաբան դպրոցի անձնվեր ներկայացուցիչները կարևոր չէին համարում նշել իրենց անունները:
6. Թեպետ որոշակի փորձեր² արված են, սակայն վերջնական չի կարող համարվել թարգմանությունների պարբերացման հարցը: Այն սերտորեն կապված է նախորդ խնդրի հետ՝ քանի դեռ պարզված չեն հունաբան հուշարձանների թվագրումները, որևէ պարբերացում փորձնական է և ենթադրյալ:
7. Ըստ ժամանակի և բնույթի պարբերացումներից բացի, ուշագրավ կլիներ նաև թարգմանությունները դասակարգել, օգտագործելով բառացիության գործոնը, այսինքն, ստորաբաժանել ըստ հունաբանության 'աստիճանի':
8. Բավականաչափ ուսումնասիրված չէ Հունաբան դպրոցի բազմաթիվ թարգմանությունների խմբագրությունների առկայության խնդիրը:

Literatur// Geschichte der christlichen Literaturen des Orients. Leipzig, 1907. S. 75—130. Ֆինկն այդ ծրագիրը բնութագրում է որպես «մշակույթի փոխանցման գիտակցված ծրագիր», Տեր-Պետրոսյան, 1992, էջ 61, Շիրինյան, Քրիստոնեական վարդապետություն անտիկ և հելլենիստական տարրերը, էջ 102-107, 112-132 և այլն:

¹ Ինչպես նշվեց, Լայդենի համալսարանում այն իրագործում էր Յ. Վայտենբերգը, տե՛ս Weitenberg, 1992, Thomson, Indices:

² Մանանդյան, 1928, Արևշատյան, 1976, Terian, 1981, Տեր-Պետրոսյան, 1982, Լ. Տեր-Պետրոսեան, Հայ հին թարգմանական գրականություն, Նիւ Եորք, 1992, P. Pontani, A contribution to the specification of the Greek lexicons used by the translators of the Հունաբան դպրոց, Armenian Perspectives, ed. N. Awde, Curzon Press, 1997, pp. 191-200:

9. Հետագրությամբ չէ նաև հետևյալ հարցը. արդյոք այս դպրոցի ներկայացուցիչներն աշխատանքի համար ունեցել են որոշակի օժանդակ նյութեր, թե՛ ոչ: Դրանք կարող էին լինել բառարաններ, կոմպենդիումներ և յուրօրինակ ուսումնական ուղեցույցներ, որոնք, գուցե, բացատրում էին բառացի թարգմանությունների սկզբունքները և նույնիսկ պարունակում լեզվական բանաձևեր¹:

Ի դեպ, հունարան հուշարձանների ուսումնասիրությունները վկայում են նման բանաձևերի առկայության մասին: Բավական է հիշատակել գրեթե բոլոր հունարան թարգմանությունների համար ընդհանուր մի քանի լեզվական առանձնահատկություններ. օրինակ, ա.) «Տեառն ասելով²» տիպի հայտնի դարձվածները³, որոնք լայնորեն օգտագործվում էին ոչ միայն նախահունարան շրջանում, բ.) հունարեն –τεος վերջավորությամբ բայաձևականները, որոնք հունարան թարգմանության մեջ փոխանցվում են անդեմ-ի վերջավորությամբ ապառնի դերբայով և հայցական ուղիղ խնդրով⁴, գ.)-ի վերջավորությամբ կրավորական անորոշ դերբայի կիրառությունը⁵ և բազում այլ առանձնահատկություններ⁶:

¹ Այս առումով ուշագրավ է Պաոլա Պոնտանիի հոդվածը (Pontani, 1997, pp. 191-200), որտեղ հեղինակը կարծիք է հայտնում, որ Հունարան դպրոցի ներկայացուցիչներն իրենց տրամադրության տակ ունեցել են նման ձեռնարկներ, բառարաններ:

² **Ուլուհոջյան**, «Տեառն ասելով», pp. X-XI:

³ Տե՛ս «Կանոնագիրք Հայոց»-ը, որտեղ շատ են այդ դարձվածները. «... **պահելով** որ ինչ ի կանոնի կայ Նիկիայ ժողովոյն՝ **աւագութեան**» (Կանոնագիրք Հայոց, աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, Ա, Երևան, 1964, էջ 275,2-3) - fulattomevwn tw'n ejn toi" kanovsi toi" kata; Nikaivan presbeivwn (Joannou I1, Const. II. 46. 21-22) .

⁴ Հմմտ. «գ... ոգիս նմա հաւատալի է» (Կանոնագիրք Ա, էջ 86,8) - tav" yucav" aujtw'/pisteutevon (Joannou I1, XLI. 6. 28-29):

⁵ fqeivresqai (Busse, 1900, p. 114,29) - «ապականիլ» (Էլիասի իմաստասիրի Մեկնութիւն Ստորոգութեանց Արիստոտելի, ի լոյս էաձ Յ. Մանանդեան, Ս. Պետերբուրգ, 1911, էջ 13, 15), fevresqai (Busse, 1900, p. 125,31) - «բերիլ» (Էլիաս, էջ 34,5), levgesqai (Busse, 1900, p. 136,14) - «ասիլ» (Էլիաս, էջ 43,9):

⁶ Որոշ շարահյուսական, քերականական, բառակազմական և այլ առանձնահատկությունների մասին տե՛ս Uluhogian, 1975, M. Shirinian, Rendering of the Greek Participial phrases in the Armenian Version of [Aristotle's] "Virtues and Vices". - Proceedings of the Fifth International Conference on Armenian Linguistics, McGill University, Montreal, Canada, May 1-5, 1995, pp. 293-297. - Caravan Books. Delmar, New-York, 1996, pp. 294-296, M. Shirinian, Notes on some syntactic, lexicological and morphological particularities

Նման ապացույց կարող է ծառայել նաև գրեթե բոլոր հունարան թարգմանություններում արձանագրված հետևյալ երևույթը. բնագրի մեկ բառի փոխանցումը երկու կամ ավելի համարժեքներով (*hendiadys*¹): Ըստ որում, հաճախ թարգմանությունում բերված առաջին համարժեքը, ի տարբերություն դրան հետևող հոմանիշի (կամ հոմանիշների), այդքան էլ չի համապատասխանում տվյալ համատեքստին: Այսինքն՝ կան դեպքեր, երբ թարգմանիչը կարող էր սահմանափակվել միայն այդ վերջին համարժեքով, առանց վկայակոչելու տվյալ բառի հայերեն մյուս բոլոր հնարավոր տարբերակները:

Ինչպե՞ս բացատրել հունարան թարգմանություններում առկա *hendiadys* կոչվող այս երևույթը: Ըստ իս, այս փաստը ևս կարող է վկայել հոգուտ այն ենթադրության, որ Հունարան դպրոցի ներկայացուցիչները, իրոք, ունեցել են բառարաններ և, այս կամ այն հունարեն տեքստը թարգմանելիս, օգտվել են դրանցից, սկզբից գրելով նման մի ձեռնարկում տրված՝ ընդունված համարժեքը, որից հետո լրացրել են այն, իրենց կարծիքով համատեքստին ավելի համապատասխանող հոմանիշով (կամ հոմանիշներով):

10. Անտեսված է Հունարան դպրոցի թարգմանիչների կողմից Աստվածաշնչից արված մեջբերումների օգտագործման խնդիրը:

11. Պարզված չեն որոշ թարգմանությունների ընտրության դրդապատճառները:

12. Դեռևս բազում անելիքներ կան լեզվական առանձնահատկությունների ուսումնասիրման գործում:

Նշված բոլոր խնդիրները կարող են առանձին ուսումնասիրության

of the Armenian Translations of Socrates Scholasticus' Ecclesiastical History. (The Longer Socrates) . " - *Le Muséon*, 108 (1995), pp. 79-84, M. E. Shirinian, G. Muradyan, The Armenian Collection of the Ecclesiastical Canons, Xristiansskij Vostok, Moskva 1999, 124-154; M. E. Shirinian, Traduzioni dal greco nella letteratura armena, - *Le scienze e le 'arti' nell' Armenia Medievale*, a cura di Anna Sirinian, Sara Mancini Lombardi, Loris Dina Nocetti, Bologna, 2003, pp. 75-91; Գ. Մուրադյան, Հունարանությունները դասական հայերենում, Ե., 2010:

¹ Hendiadys-ը, որը ստուգաբանվում է հունարեն ἐν δὶά δύοῖν արտահայտությունից և բառացի նշանակում է «մեկը՝ երկուսի միջոցով» ճարտասանության մեջ ռճական միջոցներից կամ հնարքներից էր, որի նպատակն էր միևնույն գաղափարը երկու տարբեր՝ հոմանիշ բառերի արտահայտությամբ ավելի ուժգնացնել ասածի ազդեցությունը:

Նյութ հանդիսանալ: Այստեղ հակիրճ կանդրադառնանք այդ խնդիրներից մի քանիսին: Նյութական թարգմանությունների երևույթը, եթե ոչ որպես «դպրոց», ապա որպես գրական հոսանք, հայտնի է դեռևս մ. թ. ա. 3-րդ դ.: Նման վերարտադրությունների ցայտուն օրինակ է համարվում Աֆղանստանում (Ղանդահարում) գտնված Ասոկայի էդիկտների հունարեն տարբերակը՝ մ. թ. ա. 3-րդ դ. հունարեն-արամեերեն երկլեզվյան արձանագրության մեջ¹: Այդօրինակ թարգմանությունները հետագայում տարածում ստացան նաև լատինական աշխարհում: Ուսումնասիրելով այս հարցը, Ս. Բրոկն ընդգծում է, որ բառացի և իմաստային թարգմանությունների տարբերությունն արդեն նկատելի էր հելլենիստական աշխարհում, ինչը և վկայված է Կիկերոնի, Հորատիուսի և Հիերոնիմոսի կողմից²: Այս առիթով նա գրում է.

«Հիերոնիմոսի կողմից Սուրբ գրքի հպանցիկ հիշատակումն առ այն, որ «Սուրբ գրքի բառերի կարգն անգամ խորհուրդ է», ցույց է տալիս, թե որքանով սկսեց վերանալ բառացի և ոչ բառացի թարգմանությունների հստակ սահմանազատումը (որը գործում էր նաև Հիերոնիմոսի ժամանակներում) քրիստոնեության գալու հետ, կամ ավելի շուտ, երբ սկիզբ դրվեց Աստվածաշնչի թարգմանությանը³»:

Ուսումնական նպատակը կարևոր մղիչ հանգամանք է եղել բառացի թարգմանության մեթոդի ընտրության համար ոչ միայն Հայաստանում, այլև հունա-հռոմեական աշխարհի գրեթե բոլոր երկրներում.

«Վերգիլիոսի և մյուսների՝ ուսուցման համար օգտագործվող երկլեզվյան տեքստերը (լատիներեն և հունարեն զուգահեռ այունյակներով), պատկանում են միննույն՝ չափազանց բառացի թարգմանության ոլորտին⁴»:

Այսինքն՝ մինչև հայերի կողմից բառացի թարգմանության եղանակի ընտրությունը, այն արդեն երկարատև ճանապարհ էր անցել. հունաբան ոճը հեղինակների կողմից քննարկվել և քննադատվել էր:

¹ S. Brock, *Syriac Perspectives on Late Antiquity*, London 1984, III, p. 71.

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 70:

⁴ Նույն տեղում, էջ 71:

Ըստ իս, Հայաստանում ընտրեցին բառացի թարգմանության եղանակը, գիտակցելով հանդերձ դրա դժվարությունները: Հայկական Հունաբան դպրոցն ուներ ժամանակակից նման զուգորդ. նույնատիպ գործունեություն էր ծավալված Ասորիքում, ուր ասորերեն էին թարգմանվում հունարեն երկերը¹: Հատկանշական է, որ թարգմանության համար երկերն ընտրելիս, թե՛ հայկական և թե՛ ասորական թարգմանիչների հետաքրքրության շրջանակը գրեթե նույնն էր, սակայն փոքր-ինչ տարբերություններով: Աբրահամ Տերյանը գրում է.

«Հունաբան դպրոցի կողմից ոչ մի փորձ չէր արվում թարգմանել հայտնի հեղինակների (օրինակ, Պլատոնի, Արիստոտելի, Փիլոնի և այլոց – Մ. Շ.) լիակատար երկերը. թարգմանվում էին միայն որոշ ընտրված գրվածքներ, որոնք, թվում է, օգտագործվում էին ուսումնական նպատակների համար²»:

Յուրաքանչյուր երկի ընտրությունը թարգմանության համար պատճառաբանված էր, ուստի և յուրաքանչյուր հունաբան թարգմանություն հատուկ իմաստ և արժեք էր ներկայացնում Հունաբան դպրոցի գործիչների կամ թարգմանությունը պատվիրողների համար: Օրինակ, Ջենոնի վերագրվող «Յաղագս բնութեան» հունարեն սկզբնագիր չունեցող գիրքը³, թերևս, թարգմանության համար ընտրվել էր, քանզի դրանում քրննարկվում էին ոչ միայն փիլիսոփայության, այլև տարաբնույթ գիտությունների էական հարցեր: Դա գիտությունների շաղկապվածությունը ներկայացնող յուրօրինակ ձեռնարկ է: Գիտությունների և տեսությունների դասակարգումներով հագեցած շարադրանքը ևս կարող էր շարժանիք հանդիսանալ այս երկի ընտրության համար:

Բառացի թարգմանության կամ նյութական վերարտադրության Հունաբան դպրոցի մեթոդի համաձայն, պատճենվում էին ոչ միայն բարդ բառերը, այլև բառերի կարգն ու, անգամ, շարահյուսական դարձվածները: Արդյունքում առաջանում էին բառակազմական, շարահյուսական և ձևաբանական նորաբանություններ, որոնք հաճախ շատ արհեստական

¹ Նույն տեղում, էջ 69-72; Brock, 1984, II, p. 4:

² Terian, 1981, p. 11.

³ **Լ. Խաչիկյան**, Ջենոնի «Յաղագս բնութեան» երկի հայերեն թարգմանությունը, Գիտական նյութերի ժողովածու, 2 (1950), Երևան, էջ 65-98, M. E. Stone, M. E. Shirinian, "The Anonymous Writing of [Zeno], Leiden Brill, 2000:

էին և խոչընդոտներ էին ստեղծում: Պարզ է, որ նման դեպքերում անհնար էր փոխանցել թարգմանվող լեզվի նրբությունները, օրինակ, փոխաբերական իմաստով օգտագործված, կամ, պարզապես, թարգմանվող լեզվում համարժեքը չունեցող բառերը: Վերջին դեպքում թարգմանիչը հարկադրված էր տառադարձելու այդ բառերը:

Մինչև Հունաբան դպրոցի գործունեությունը Հայաստանում նախահունաբան թարգմանություններում բառացի մեթոդն օգտագործվում էր շարահյուսական դարձվածների փոխանցման համար: Այդ փաստը, Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայ»-ի տեքստի հիման վրա, լավագույնս ապացուցել է Գ. Ուլուհոջյանը՝ «տեառն ասելով» (κυρίου εἰπόντος) տիպի դարձվածները դիտելով որպես հունական բացարձակ սեռական հոլովի փոխանցում¹:

Հատկանշական է, որ հայերը չեն կիրառել Հունաբան դպրոցի մեթոդն աստվածաշնչային տեքստերը թարգմանելիս: Միևնույն ժամանակ հայ թարգմանիչները չեն խախտել նաև այն սկզբունքը, ըստ որի Սուրբ գրքում (նվիրական գրքերում) չէր կարելի փոխել անգամ բառերի կարգը:

Առանձնահատուկ ուշադրության են արժանի Հունաբան դպրոցի ծագման անհրաժեշտության, գործունեության ծրագրի գոյության և որդեգրած մեթոդի ընտրության շաղկապված խնդիրները: Հունաբան դպրոցն իրագործում էր մի դժվարին խնդիր, այն է. Հայաստանում պահպանելու քրիստոնեությունը և դավանաբանական վեճերին դիմակայելու նպատակով հայկական միջավայր փոխանցել դարավոր ուղի անցած հունական գիտության արժեքավոր նյութերը: Թարգմանվող գրվածքները, հիմնականում, փիլիսոփայական երկեր էին, սակայն այդ դպրոցի ծրագիրը չէր սահմանափակվում միայն փիլիսոփայությամբ:

Դեռևս Փիլոն Ալեքսանդրացին նշում էր, որ բացի Աստծու շնորհով տրված սուրբ գրքերի այլաբանական խորհրդի հասանելիությունից, անհրաժեշտ էր նաև փիլիսոփայության ուսումնասիրությունը, ինչը հնարավոր էր միայն եռյակ և քառյակ ազատ գիտություններին տիրապետելուց հետո: Այս է պատճառը, որ Հայաստանում Հունաբան դպրոցի հիմնական նպատակներից մեկն էր ստեղծել եռյակ գիտությունների դասագրքեր, ինչը կարևոր քայլ էր քառյակ գիտությունների ուսումնասիրմանն անցնելու համար:

¹ Uluhogian, 1993, pp. X-XI.

Հունական գիտական նվաճումներն ու մասնագիտական եզրերը (տեխնիկական տերմինները) հայոց հողի վրա «պատվաստելու» համար Հունաբան դպրոցը պետք է հստակ մշակված ծրագիր ունենար: Դրա համար կային արդեն հելլենիզմի դարաշրջանում մշակված նախադրյալներ: Մի՞թե այդ հստակ ծրագրի նպատակն էր հունական գիտության նվաճումների սոսկ տիրապետումը ու գիտական եզրերի ստեղծումը: Ո՞րն էր առաջնահերթ և ովքե՞ր էին այդ ծրագրի հեղինակները:

Սկսենք վերջին հարցից, որի պատասխանը շոշափվել է: Ինչպես արդեն մեկնաբանվեց, ենթադրվում է, որ Հայոց եկեղեցին ուներ հստակ շարունակական ծրագիր՝ բազում ոլորտների ընդգրկումով: Ակնարկվեց նաև, որ Հունաբան դպրոցը նույնպես իր գործունեությունը ծավալեց եկեղեցու վերոհիշյալ ծրագրի շրջանակներում, որի վերաբերյալ մանրամասն տեղեկություններ չկան, սակայն հնարավոր է որոշ ենթադրություններ անել:

Հիմնվելով զանազան տեղեկությունների և օրինակների վրա, ես նույնպես հանգել եմ այն եզրակացության, որ Հունաբան դպրոցի գործունեությունն ու ընտրած մեթոդը ծրագրված էին: Նախ, ծրագրի գոյության մասին է վկայում այդ դպրոցի հարուստ ժառանգությունը: Այդ քանակությամբ նույնաոճ (նկատի ունենք հունաբան ոճը) թարգմանություններ չէին կարող կատարվել առանց ծրագրի ունենալու: Կարելի է միայն ենթադրել, որ այդ դպրոցի ներկայացուցիչներն առաջնորդվում էին աշխատանքային հատուկ սկզբունքներով:

Ծրագիր ունենալու մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ որոշ հունաբան թարգմանություններ, բառացի լինելով հանդերձ, որոշակիորեն տարբերվում են իրենց բնագրերից: Այսինքն՝ կան հունաբան թարգմանություններ, որոնք չունեն և չպետք է ունենան ճշգրտորեն համապատասխանող հունարեն բնագրեր, քանզի կազմված են հունական տարաբնույթ աղբյուրների բառացի ընդօրինակումից և որոշ ինքնուրույն դրվագներից: Պարզապես, մեզանում առկա են սոսկ հունաբան թարգմանություններ համարվող երկեր, որոնք, իրականում, հայկական միջավայրում կազմված համառոտ հավաքածու-ձեռնարկներ (կոմպենդիումներ) են: Այդ եզրակացությունը հիմնավորելու համար դիմել ենք Զենոնին վերագրվող «Յաղագս բնութեան» և «Պիտոյից գիրք» հունարեն սկզբնագիր չունեցող երկերին: Նույն մեթոդը, ըստ իս, մասամբ կիրառվել է նաև հունարեն նախօրինակները պահպանած, սակայն բնագրից

որոշ շեղումներ ցուցաբերող Դավիթ Անհաղթի մեկնություններում, Թրակացու «Քերականություն»-ում և մի քանի այլ երկերում ևս: Դրանից ելնելով՝ կարելի է առաջարկել հունաբան գրվածքների զատում կատարել ըստ համառոտ հավաքածու-ձեռնարկների (ըստ տարատեսակների) և բուն թարգմանությունների: Ասվածը նշանակում է նաև, որ Հունաբան դպրոցը ծավալել էր ոչ միայն զուտ թարգմանչական, այլև մեկնողաթարգմանչական գործունեություն:

Մասնագիտական գրականության մեջ արժարժված պատճառներից բացի, Հունաբան դպրոցի գործունեության նպատակը, թերևս, կրում էր նաև դավանաբանական բնույթ: Կարևորագույն փիլիսոփայական, աստվածաբանական, պատմագրական գրվածքների թարգմանությունը, ինչպես նաև հայերենում բացակայող եզրերի ստեղծումը հնարավորինս նպաստելու էր դավանաբանական բանավեճերում հակաբանվելու կարողությանը: «Սպառազինվելով» այդօրինակ թարգմանություններով, հայերը հավելյալ 'զենք' էին ձեռք բերում Բյուզանդիայի զավթողական նկրտումներին դիմակայելու համար¹: Ուստի հունաբան թարգմանությունների երևան գալու կարևոր դրոշապատճառները կրում էին դավանաբանական և քաղաքական բնույթ: Քաղկեդոնի ժողովը՝ ջրբաժան հանդիսանալով արևմտյան և արևելյան եկեղեցիների միջև, էլ՝ ավելի սրեց դավանաբանական, իմա՝ քաղաքական նման մի «զենք» ունենալու անհրաժեշտությունը:

Հայոց եկեղեցին այդ ժամանակից ի վեր ջանում էր հավասարակշռություն պահպանել ստեղծված բարդ քաղաքական իրավիճակի, իր իրավունքների ու պարտականությունների միջև: Իրենց դավանանքը հավաստելու նպատակով, հայերը ոչ միայն ինքնուրույն ջատագովություններ էին գրում, այլև թարգմանում էին այն երկերը, որոնք համաձայն էին Նիկիայի ժողովի «Հավատո հանգանակ»-ին: Ինչպես հայտնի է, դրանք, հիմնականում, վաղ շրջանի (մինչև Քաղկեդոնի ժողովը) հայրաբանական, արարողական, ջատագովական, մեկնողական երկեր էին,

¹ Հմմտ. Մ. Է. Շիրինյան, Մեկնողական ժանրի կազմավորումը և զարգացումը Հայաստանում, Աշտանակ Գ, Հայագիտական պարբերագիրք, Երևան 2000, էջ 41-47: Հայաստանի հանդեպ Բյուզանդիայի նվաճողական քաղաքականության մասին տե՛ս նաև՝ Է. Դանիելյան, Հայաստանի քաղաքական պատմությունը և Հայ Առաքելական եկեղեցին (VI-VII դարեր), Երևան, 2000:

ինչպես նաև եկեղեցական պատմություններ ու կանոններ: Առաջ քաշելով և մեջբերելով այդ աշխատությունների վկայությունները, հայերը հետագա ողջ պատմության ընթացքում փորձում էին ապացուցել, որ Նիկիայի «Հավատո հանգանակ»-ը միակ ճշմարիտ և ընդունելի տարբերակն է:

Հնարավոր է նաև ենթադրել, որ դպրոցի գործունեության համար ընտրված մեթոդն ու ծրագիրը սերտորեն շաղկապված էին: Այսինքն՝ այլաբանական խորհրդի առկայության և եկեղեցու մասնակցության շնորհիվ էր, որ, ի թիվս այլ պատճառների, Հունաբան դպրոցը որդեգրել էր բառացի թարգմանության այնպիսի մի մեթոդ, որն այդ տեքստերը դժվարհասկանալի էր դարձնում հասարակ մահկանացուների համար: Այդ գործերը, բացառությամբ մի քանի դավանաբանական բնույթ ունեցող երկերի, հիմնականում, «արտաքին» գրվածքների թարգմանություններ էին և մատչելի միայն հունարեն լեզվի և իմաստասիրության գիտակներին:

Բացի այդ, Հունաբան դպրոցի ենթադրյալ ծրագիրը, թերևս, հետապնդում էր նաև մեկ այլ նպատակ: Նորություն չէ, որ որոշ հունաբան թարգմանություններ, բառացի լինելով հանդերձ, մասնակիորեն տարբերվում են իրենց բնագրերից: Արդյոք շատ դեպքերում միտումնավոր չէ՞ն ներմուծված այդ տարբերությունները: Հունաբան դպրոցի ներկայացուցիչները, հարազատ մնալով բառացի թարգմանության մեթոդին, արդյոք իրենց թույլ չեն տվել ազատ գործելու և թարգմանված դրվագներից նոր, հունարենում գոյություն չունեցող ձեռնարկներ ստեղծելու: Ըստ այս վարկածի, կան հունաբան թարգմանություններ համարվող երկեր, որոնք, իրականում, հայկական միջավայրում կազմված համառոտ հավաքածու-ձեռնարկներ են:

Հնարավոր է, որ հիմնականում ուսումնական նպատակով կազմված այդ ձեռնարկներն իրենցից ներկայացնում էին կա՛մ երկերից հատվածաբար արված և ի մի բերված թարգմանություններ, կա՛մ՝ մասամբ թարգմանված լինելով հունարենից, պարունակում էին նաև որոշ ինքնուրույն հատվածներ: Պարզ է, որ դրանք չունեն և չէին կարող ունենալ համադիր հունարեն սկզբնաղբյուրներ:

Այս եզրակացությանն են հանգել Ջենոնին վերագրվող «Յաղագս բնութեան» երկն ուսումնասիրելիս: Նույն խմբին է պատկանում նաև «Պիտոյից գիրք»-ը: Սրանք գրվածքներ են, որոնք, այստեղ առաջ քաշվող վարկածի համաձայն, չունեն մեկ հունարեն սկզբնագիր, այլ կազմված են հունարեն աղբյուրներից բառացի թարգմանված հատվածներից

և միաձուլված են որպես թեմատիկ հավաքածուներ: Նշված ձեռնարկներում՝ տեսանելի են թարգմանչի կողմից հունաբան ոճով արված հեղինանակային հավելումները:

Ձենոնին վերագրվող փիլիսոփայական քննախոսությունը փիլիսոփայական, էկլեկտիկ՝ հին ու նոր տեսությունների (օրինակ, այութագորյան, նորպլատոնական²)՝ հակիրճ, կցկտուր ձևով ներկայացված, խառնիճաղանջ մի հավաքածու է: Երկը, գրեթե ամբողջովին, թարգմանություն է, ինչի մասին կարելի է ստույգ ասել, հիմնվելով գրվածքի չափազանց հունաբան լեզվի և այլ առանձնահատկությունների վրա³: Ըստ իս, եղել են ոչ թե մեկ, այլ մի քանի աղբյուրներ, որոնցից հեղինակը հատվածաբար թարգմանություններ է կատարել: Թարգմանչի սահմանափակ միջամտությունը զգացվում է միայն որոշ քրիստոնեացված դրվագներից: Գրվածքի ոճը, խրթին հունաբան լեզուն դժվարըմբռնելի են դարձնում այն: Նույնիսկ տպավորություն է ստեղծվում, որ այդ գրվածքը ոչ թե դասագիրք է, այլ դասախոսությունների համառոտագրում, որի լիարժեք վերծանությունը հասկանալի էր, թերևս, միայն հեղինակին: Այնուամենայնիվ, ուսումնասիրողների կողմից մի քանի փորձ է արված լուսաբանելու բարդ հանգույցներով լի այդ երկը⁴:

Ինչ վերաբերում է «Պիտոյից գրքին», ապա դեռևս 1983 թ. Հ. Թամրազյանը մատնանշել է, որ դրանում առկա են ոչ թարգմանական մասեր.

«...Բայց թե եւ այլոց ոմանց տյն ճառեցաւ քերթողաց, սակայն մեք առանց քննելոյ ոչ հարեանցի թողցուք»: Նշանակում է, մեր հեղինակը չի բավարարվում սոսկ ուրիշների քննությամբ, հարկ է համարում գրել ըստ էության և լուրջ, շարադրել իր տեսակետը, դրսևորում է հատուկ շահագրգռություն Եվրիպիդեսի ողբերգության և՛ սյուժեի, և՛ ներքին իմաստի նկատմամբ:

¹ Երկու ձեռնարկների համար էլ աղբյուր են ծառայել մի քանի հեղինակների երկերի հիմնական դրոյթները:

² Տե՛ս **E. G. Schmidt**. Die altarmenische “Zenon”, 1960, Nr. 2. Berlin, Akademie-Verlag, 1961, S. 1-50 **Stone, Shirinian**, pp. 26-28:

³ **Stone, Shirinian**, pp. 18-21.

⁴ **Խաչիկյան**, Ձենոնի «Յաղագս բնութեան» երկի հայերեն թարգմանությունը, էջ 65-98, **Арешатян**. 1956, ss. 321-322, **Schmidt**, 1961, S. 1-50, **Stone, Shirinian**, pp. 3-28, 127-163:

Թերևս, այս նախադասությունը մի հարմար բանալի է, որ բացում է «Պիտոյից գրքի» ստեղծման գաղտնիքը, ցույց տալիս օտար ու հայկական շերտերը: Հեղինակը լավ ծանոթ է եղել հունական աղբյուրներին, օգտագործել է նրա տեսական սկզբունքները, վերլուծությունների և օրինակների մի մասը, բայց անհրաժեշտության դեպքում, նկատի ունենալով հարցի կարևորությունը, դրսևորել է ինքնուրույնություն, շարադրել է իր տեսակետը, բերել է իր դատումն, այսինքն, քննությունն, ինչպես հայ հեղինակները մեկնաբանում են Թրակացու քերականության մեջ եղած կրիտիկա տերմինն¹»:

Նույն միտքն ավելի հանգամանորեն է արտահայտել Գ. Մուրադյանը, որը տարիներ շարունակ զբաղվել է այդ գրքի հետազոտությամբ². Նա հանգել է այն եզրակացության, որ երկը բաղկացած է թարգմանված և ինքնուրույն գրված հատվածներից, որոնց զգալի մասը հունարեն նախօրինակի ընդօրինակումն է:

Թվում է, որ նույն մեթոդը **մասամբ** կիրառվել է նաև Դավիթ Անհաղթի մեկնություններում, ինչպես նաև Թրակացու «Քերականության» դեպքում և գուցե, մի քանի այլ երկերում: Այդ գրվածքների հունարեն բնագրերը պահպանվել են: Թեպետև դրանց թարգմանությունները, ընդհանուր առմամբ, բառացի են, սակայն կան որոշ շեղումներ բնագրից: Դավթի մեկնություններում այդ հանգամանքը նկատել է Ս. Արևշատյանը³, իսկ Թրակացու երկում առկա շեղումները նշել է Գ. Ջահուկյանը⁴:

Ինչպես մեկնողական բնույթի, այնպես էլ բանաքաղված դրվագնե-

¹ **Հր. Թամրազյան**, հայ քննադատություն, Գիրք Ա, Երևան, 1983, էջ 378:

² Գիրք պիտոյից, աշխատասիրությամբ Գ. Մուրադյանի, Երևան, 1993; G. Muradyan, The Rhetorical Exercises (Progymnasmata) in the Old Armenian "Book of Chreia" (Girq' pitoyic'), Translation or Original Composition? (On the Occasion of P. Cowe's Review), REArm, 2001: «Պիտոյից գրքի» ոչ թարգմանական մասերի խնդիրը շարունակվող բանավեճի առիթ էր դարձել Գ. Մուրադյանի և Պ. Քաուի միջև:

³ **Ս. Ս. Արևշատյան, Դավիթ Անհաղթ**. Վերլուծութիւն «Ներածութեանն» Պորփիրի, Երևան 1976, մասնավորապես էջ XXX-XXXI, հմմտ. նաև տողատակերում: Անունների հայացման մասին տե՛ս R. Thomson, Notes on the Armenian Version of David the Invincible's "Definitions of Philosophy", 1983, 390-401:

⁴ **Գ. Ջահուկյան**, Դավթի քերականական մեկնության նորահայտ ամբողջական ձեռագիր տեքստը - ԲՄ, հտ. 3, Երևան 1956, էջ 241-264, էջ 61-90:

րից կազմված հավաքածու-ձեռնարկները տարածված էին նաև հունական աշխարհում, և այնտեղ կրթություն ստացած հայերը պետք է քաջածանոթ լինեին այդ մեթոդին: Հետևաբար Հունաբան դպրոցի գրվածքները հնարավոր է բաժանել համառոտ հավաքածու-ձեռնարկների (իրենց տարատեսակներով) և բուն թարգմանությունների, այսինքն՝ կարելի է ընդունել, որ Հունաբան դպրոցը ծավալել էր ոչ միայն զուտ թարգմանչական, այլև մեկնողա-թարգմանչական գործունեություն (ինչպես արդեն նշվեց վերը): Հիշենք, որ «թարգմանել» բառն ուներ նաև «մեկնել» («բացատրել») իմաստը:

Հունաբան դպրոցի գործունեության ուսումնասիրման խնդիրներից մեկը պետք է համարել այդ թարգմանությունների հստակ դասակարգումն ըստ նյութի, լեզվաբանական առանձնահատկությունների, օգտագործված եզրերի և այլն: Այդպիսի դասակարգումներն ավելի ակներև կդարձնեն այս դպրոցի թողած ժառանգությունը և թույլ կտան ճիշտ եզրակացություններ անել այս կամ այն թարգմանության հեղինակային պատկանելությունը, տեղն ու ժամանակը որոշելիս: Դրանք կարող են նպաստել տարընթերցումների ընտրությանը կամ բնագրի աղճատված հատվածների վերականգնմանը: Արդ, նկատի առնելով այդ թարգմանությունների «բառացիության» աստիճանը, առաջարկենք հետևյալ դասակարգումը¹.

1. Ծայրահեղ բառացի թարգմանություններ:
2. Թարգմանություններ, որոնք աննշան են տարբերվում բնագրից: Որպես կանոն, դրանք անունների և անհասկանալի բառերի թարգմանություններն են (օրինակ, այս խմբին է պատկանում վերն արձարծված «Վարք Սեղբեստրոսի» հունաբան թարգմանությունը):
3. Թարգմանություններ, որոնցում տարբերությունները միտումնավոր են ներմուծված: Այս խումբը, իր հերթին, հնարավոր է բաժանել երկու ենթախմբի.
 - ա) առկա տարբերությունները ներմուծված են հենց թարգմանչի կողմից (օրինակ, Ջենոնին վերագրվող *Յաղագս բնութեան* երկում՝ նյութի քրիստոնեացումը, և անգամ, Դավիթ Անհաղթի երկերից բերված հատվածները):
 - բ) Տարբերությունները ներմուծված են հետագա գրիչների կողմից (Ա-

¹ Shirinian, Eikasmos, pp. 235-236.

րիստոտելին վերագրվող «Յաղագս առաքինութեանց» հունարան թարգմանության դեպքում պահպանվել է ակնհայտորեն գրչի կողմից ընդմիջարկված մի ձեռագիր):

4. Թարգմանությունների չորրորդ խումբը, այստեղ առաջարկվող դասակարգման համաձայն, ներառում է այն տեքստերը, որոնցում թարգմանությունը զուգորդված է բնագրային կտորների հետ: Մեծ մասամբ, դրանք հավաքածու-ձեռնարկներ էին (որպես նմուշ կարելի է նշել «Գիրք պիտոյից»-ը):

Հպանցիկ քննարկենք նաև Հունարան դպրոցի թարգմանությունների խմբագրությունների հարցը: Թարգմանություններին զուգահեռ գոյություն ունեցող հավելյալ խմբագրությունների երևույթը տարածված էր ոչ միայն հունարան, այլև բազում տարաբնույթ աղբյուրների համար: Սակավաթիվ գիտնականներ են անդրադարձել այդ խնդրին¹ և երբևիցե հանգամանորեն չի քննարկվել այն հարցը, թե երկրորդ տարբերակի հեղինակը, թարգմանությունը խմբագրելիս, օգտվե՞լ է բնագրից, թե՛ ոչ: Թարգմանության երկրորդ տարբերակի գոյությունը մեզանում հաճախ բացատրվում է այն հանգամանքով, որ հունարան թարգմանությունները դժվար հասկանալի էին, իսկ տեղ-տեղ նույնիսկ անհասկանալի՝ առանց հունարեն բնագրի: Դրանցից շատերը, ինչպես նշվեց, ստեղծված էին որպես դասագիրք, և հստակ է, որ հունարան լեզվի «ընձեռած» դժվարությունները չէին կարող նպաստել հունարան թարգմանությունների՝ ուսումնական նյութ ծառայելուն: Ուրեմն, հարկ էր վերաշարադրել և պարզեցնել այդ գրվածքները:

Վերամշակված խմբագրությունները հիմնականում ավելի փոքրածավալ էին, քան թարգմանությունները, սակայն միևնույն ժամանակ ունեին նաև հավելումներ: Ծավալի կրճատումներն ու հավելումները, նախ և առաջ, պայմանավորված էին այդ թարգմանությունների՝ ուսումնական ձեռնարկ լինելու առաքելությամբ:

Բացթողումներն արվում էին ինչպես գրքի ծավալը կրճատելու, այնպես էլ, ըստ խմբագրողի, անհետաքրքրական մասերը նվազեցնելու հա-

¹ Տե՛ս օրինակ՝ **H. Lehman**, What Translators Veil and Reveal, Armenian Texts Tasks and Tools, ed by H. Lehman and J. J. S. Weitenberg, Aarhus University Press, 1993, pp. 75-84; Thomson R. W. Quotations from Athanasius in the Root of Faith, Armenian and Biblical Studies, ed. by M. E. Stone, Jerusalem 1976, pp. 182-203:

մար: Իսկ լրացումները հաճախ դավանաբանական բնույթի հատվածներ էին, ինչը կարելի է ևս ընկալել որպես մեկ՝ դավանաբանական պատճառայորինակ խմբագրությունների ստեղծման համար: Այսինքն՝ չբավարարվելով այս կամ այն երկում շարադրված դավանաբանական հարցերի քննությամբ, խմբագրողները զարգացնում կամ կրճատում էին այն: Այդ տարբերակները կարող էին խմբագրվել նաև հետագայում, առավելապես դասագիրք դառնալու պայմանով: Խմբագրողի համար, հիմնականում, հիմք էր հանդիսանում հայերեն թարգմանությունը և, որպես կանոն, նա տեղյակ չէր հունարեն բնագրին: Թարգմանության և համառոտագրության միևնույն վերնագրի պահպանումը, մեծ մասամբ, օրինաչափ էր այդ տարբերակների համար:

Գրեթե բոլոր նշված կետերը լավագույնս տեսանելի են Սոկրատ Սքուլաստիկոսի «Եկեղեցական պատմություն»-ում և «Սեղբեստրոսի վարք»-ում, ինչպես նաև դրանց ընդհանուր խմբագրություն հանդիսացող Փոքր Սոկրատում¹:

Հունաբան դպրոցի գործունեությունն ուսումնասիրելիս, ուշագրավ և նվազ հետազոտված խնդիրներից է թարգմանիչների կողմից Աստվածաշնչից արված մեջբերումների կիրառումը: Նույնը հնարավոր է ասել նաև վաղ շրջանի հայ պատմիչների գրվածքների վերաբերյալ: Այդ բնագրերը հրատարակելիս, մեզանում, որպես կանոն, անտեսվում է աստվածաշնչային վկայությունների ցանկերի պատրաստումը՝ ինչը հարակից, օժանդակ միջոց լինելով, նպաստում է խնդրի ուսումնասիրմանը: Ի դեպ, այդօրինակ ցանկերի բացակայությունը լավագույնս փաստում է հարցի դուրս մնալը գիտական հետաքրքրության ոլորտից:

Հունաբան դպրոցի թարգմանություններում Աստվածաշնչից կատարված մեջբերումները բնութագրվում են որպես նկատելիորեն ազատ, կանոնականացված տեքստից տարբերվող հատվածներ: Ըստ որում, յու-

¹ M. E. Shirinian, The Ancient Armenian Versions of Socrates Scholasticus's "Ecclesiastica Historia": Their Destiny in the Armenian Milieu, Acts, XVIIIth International Congress of Byzantine Studies, Selected Papers: Moscow, 1991, Volume IV: Literature, Sources, Numismatics and History of Science, Byzantine Studies, Shepherdstown, WV, USA, 1996, pp. 217-222, M. Shirinian, The Armenian Versions of Vita Silvestri" (10-th Anniversary Conference of AIEA, September 1-5, 1993, London) - Armenian Perspectives, ed. by N. Awde, Curzon, Caucasus World, 1997, pp. 69-75:

րաքանչյուր հունաբան թարգմանության համար այդ «ազատության» չափը նույնպես տարբեր է. դրանք, պարզապես, կա՛մ վերապատումներ են, կա՛մ էլ՝ անստույգ մեջբերումներ: Այդպիսի օրինակները չափազանց շատ են այստեղ քննարկվելու համար. դրանք առանձին ուսումնասիրության առարկա են: Վերջերս հրապարակված երկու հոդվածներում¹ անդրադառնալով հենց այս թեմային առաջարկել եմ հետևյալ դիտարկումները.

ա.) աստվածաշնչային մեջբերումներն այս կամ այն թարգմանության մեջ բավականին տարբերվում են այսօր մեր ձեռքին եղած կանոնիկ տեքստից, բ.) վաղ շրջանի հայ պատմիչների թողած տեղեկությունները ևս նպաստավոր են եզրահանգումներ անելու համար: Այդ հեղինակները, ճիշտ է, չեն վերապատում Աստվածաշնչի դրվագները, սակայն մեջբերումներ կատարելիս, նույնպես որոշ ‘ազատություն’ են ցուցաբերում²:

Ամփոփելով Հունաբան դպրոցի թարգմանություններին վերաբերող խնդիրների վերլուծությունը, երկու խոսքով անդրադառնանք նաև դրանց կարևորությանն ու նշանակությանը:

Նախ՝ հարկ է նշել, որ հունաբան (և ոչ միայն հունաբան) թարգմանությունների հիմնական արժանիքն այն է, որ դրանց շնորհիվ մեզ են հասել մի շարք կորած բնագրեր: Ուշագրավ է, որ դրանց շարքում կան այնպիսի հունարեն երկեր, որոնց գոյության մասին հունական աղբյուրներում ոչ մի տեղեկություն չի պահպանված: Նկատի ունենք Կեղծ Ջենոնի վերն արծարծված գրվածքը, որը եզակի արժեք է ստանում հենց այդ պատճառով:

Ոչ պակաս կարևոր է, իսկ մեզ համար, և գուցե ամենակարևորն է Հունաբան դպրոցի նշանակությունը տերմինաբանության ոլորտում: Հենց այս դպրոցի գործունեությունը հայոց լեզուն մեծապես հարստացրեց փիլիսոփայական, աստվածաբանական, քերականական, ճարտա-

¹ **Է. Մ. Շիրինյան**, Սուրբգրային վկայակոչումները վաղ շրջանի հայկական որոշ երկերում և հունաբան թարգմանություններում, *Էջմիածին*, 2, 2010, էջ 45-52, M. E. Shirinian, BIBLICAL QUOTATIONS IN EARLY ARMENIAN LITERATURE. In: Armenia between Byzantium and the Orient, Celebrating the Memory of Karen Yuzbashian (1927–2009), Series: Brill 2020, pp. 23–34:

² **Է. Մ. Շիրինյան**, Սուրբգրային վկայակոչումները, էջ 52, Shirinian, BIBLICAL QUOTATIONS, p. 34:

սանական, բնագիտական և բազում այլ եզրերով: Հետաքրքրական է, որ այդ բառերը ցայժմ էլ մենք օգտագործում ենք, առանց իմանալու անգամ, որ դրանք խնդրո առարկա դպրոցի ներկայացուցիչների անձնուրաց աշխատանքի արդյունքն են: Ի դեպ այսօր էլ, Հունաբան դպրոցի մեթոդն ու մոտեցումները՝ ճիշտ օգտագործելու դեպքում, տարբեր ուղորտների համար կարելի է թարգմանել կամ ստեղծել մեզանում ավելի գրագետ մասնագիտական եզրեր, քանի որ լեզուն անընդհատ զարգանում և փոխվում է, և քաղաքակրթության զարգացման հետ առաջ են գալիս նորանոր՝ մեր լեզվում բացակայող տերմիններ, որոնք շատ դեպքերում կարիք ունեն «հայացվելու»:

Հիշատակման արժանի է այն փաստը, որ հունաբան թարգմանություններում առկա տերմինները կարող են լավագույնս ծառայել նաև հունարեն համարժեք եզրերի փոփոխման և փոխանցման պատմությունն ուսումնասիրելու համար: Բերենք Կեղծ Ջենոնի երկի օրինակը, որի բնագիրը, ինչպես նշվեց, մեզ չի հասել: Շնորհիվ գրվածքի խիստ հունաբան լեզվի, տեսանելի և վերականգնելի են այդտեղ առկա բազմաթիվ եզրերի հունարեն համարժեքները: Քանի որ քրիստոնյա հեղինակի կողմից գրված այս երկը տարբեր, հիմնականում, փիլիսոփայական տեսությունների միաձուլում է, հնարավոր է նաև հետևել դրանում առկա տերմինների զարգացման ընթացքին:

Հունաբան դպրոցի թարգմանությունները, բացի լեզվաբանական նշանակությունից, անգնահատելի են բնագրային և տեքստաբանական խնդիրները լուսաբանելու համար: Օրինակ, «Սեղբեստրոսի վարք»-ի հունարեն բնագրի ստեղծման ժամանակը մասնագետների շրջանում տարակարծություն է առաջացրել. որոշ գիտնականներ, այդ երկը նույնիսկ 8-9-րդ դդ. են վերագրում: 678 թ. արդեն գոյություն ունեցող հայերեն թարգմանությունը՝ հանդիսանալով *terminus ante quem*, լուծում է այդ հարցը և հաստատում է այն վարկածը, որ այդ երկը լատիներենից հունարեն պետք է թարգմանված լիներ հայերեն թարգմանությունից ավելի վաղ¹:

Որոշ վերապահումներով հնարավոր է նույնիսկ եզրակացնել, որ շնորհիվ Հունաբան դպրոցի գործունեության, ինչ-որ չափով շարունակվեցին հունական հեթանոսության գիտական ավանդույթները, որոնք,

¹ Ավելի մանրամասն տե՛ս Shirinian, VS. pp. 69-75:

ինչպես հայտնի է, անկում էին ապրել Բյուզանդիայի, այսպես կոչված՝ «մութ դարերի» շրջանում:

Այսպիսով, հունաբան թարգմանություններն անգնահատելի են բնագրի վավերականության հետ կապված հարցերի լուծման համար, ուստի և կարևորագույն աղբյուրներ են տվյալ երկի քննական բնագիրը պատրաստելիս: Միևնույն ժամանակ, չի կարելի մոռանալ, որ հունարեն բնագիրն էլ, իր հերթին, մեծ կարևորություն ունի և մեծ դեր կարող է խաղալ հայերեն հունաբան տեքստի քննական հրատարակությունը հրատարակելիս:

Այս դպրոցի մեթոդը թույլ է տալիս ընտրել ճիշտ տարընթերցումները, ուղղել աղճատված հատվածները, երբեմն էլ, վերականգնել բաց թողնված բառերը և, նույնիսկ, պարբերությունները: Հաճախ հայերեն և հունարեն տեքստերը բաղդատելիս, հայերեն նյութը տալիս է հունարեն բնագրում բացակայող տեղեկություններ: Հիմնականում դրանք վավերական հատվածներ են, որոնց բնօրինակները կա՛մ կորել են, կա՛մ աղճատվել տեքստի փոխանցման, հաղորդման ընթացքում: Հատվածների վերականգնումը կարող է ստույգ համարվել, մասնավորապես այն դեպքում, երբ դրանցում կան փոխառված բառեր: Այսինքն՝ եթե բառը փոխառված է, ապա, հիմնականում կարելի է ասել, որ դա թարգմանություն է հունարենից, այլ ոչ թե հեղինակային հավելում: Այս պատճառով է, որ հունաբան թարգմանության առկայության դեպքում հունարեն տեքստի քննական բնագիրը հրատարակելիս, հաճախ դիմել են երկի հայերեն թարգմանության օգնությանը¹:

Պետք է նշել սակայն, որ այդպիսի վերականգնումները հարկ է կատարել զգուշորեն, չմոռանալով վերը նշված թարգմանությունների միջև եղած 'բառացիության' տարբերությունների գործոնը: Ամեն դեպքում, լիովին վստահելի չէ որոշ մասնագետների² որդեգրած հունաբան թարգ-

¹ Որպես օրինակ կարելի նշել հետևյալ կարևոր հրատարակությունները, որոնց քննական բնագիրը պատրաստելիս մեծապես օգտագործված են հայերեն հունաբան թարգմանությունները՝ Morani, Nemesius u. G. Ch. Hansen, M. Širinjan, Sokrates Kirchengeschichte, Akademie Verlag, Berlin 1995:

² Հմմտ. օրինակ պրոֆ. Ֆ. Զիգերտի մոտեցումը հետևյալ հրապարակման մեջ. Philon von Alexandrien, *Über die Gottesbezeichnung "wohlthätige verzehrenden Feuer" (De deo)*, Rückübersetzung des Fragments aus dem Armenischen, deutsche Übersetzung und Kommentar von F. Siebert, J. C. B. Mohr (Paul Siebeck) Tübingen, 1988.

մանությունները հունարեն լեզվով վերաթարգմանելու մեթոդը:

Հունաբան թարգմանություն ունեցող հունարեն հուշարձանների համար կարելի է հիշատակել ևս մեկ կարևոր հանգամանք: Այն է. այդ թարգմանությունները նպաստում են ուսումնասիրելու հունարեն բնագրերի պատմությունը, որոշելու տվյալ տեքստի մեզ հասած ձեռագրերի ընտանիքները և կապերը: Այսինքն՝ երբ հունարեն բնագիրը մեզ է հասել մի քանի տարբերակներով, կամ տեքստի պատմության ընթացքում ընդմիջարկություն է կատարվել, հունաբան թարգմանության առկայության դեպքում կարելի է որոշակի եզրակացություններ անել դրանց վերաբերյալ: Օրինակ, Արիստոտելին վերագրվող «Յաղագս առաքինութեանց» հունարեն տեքստը, բացի բազում ձեռագրերից, մեզ է հասել Ստոբեոսի և Անդրոնիկոսի վերամշակմամբ: Այս դեպքում դրա հունաբան թարգմանությունը, որը սերում է սկզբնագրից և կապ չունի այդ խմբագրությունների հետ, որոշ չափով նպաստում է տեքստի պատմության ճիշտ ընկալմանը¹:

Մեկ այլ հատկանշական օրինակ է «Սեղբեստրոսի վարք»-ի է՛լ ավելի խճճված հունարեն տեքստի պատմությունը: Այն մեզ է հասել 90 ձեռագրերով և մի քանի տարբերակներով: Ընդ որում հունարեն բնագրի հրատարակիչ Կոմբեֆիի օգտագործած ձեռագրերում բացակայում են հատվածներ, որոնք առկա են հայերեն հունաբան թարգմանությունում: Ուստի, այս դեպքում ևս այն օգնում է գաղափար կազմել հունարեն բնագրի լիարժեք տեքստի վերաբերյալ և պարզել դրա պատմության հետ կապված որոշ հարցեր:

Ավելին, Հունաբան դպրոցի մեթոդի՝ բառացի թարգմանության, պատճառով հաճախ ընդօրինակվել են բնագրային սխալներ, որոնց շնորհիվ կարելի է տեքստի պատմության մասին պատկերացում կազմել²: Համենայն դեպս, նման հունաբան աղբյուրները, լինելով չափա-

¹ Ավելի մանրամասն այդ թարգմանության մասին տե՛ս M. E. Shirinian, Armenian Translation of [Aristotle's] "De Vitiis et Virtutibus". – Verbum, Sankt-Peterburg 2002, pp. 166-171:

² Տե՛ս օրինակ Հերակլիտեսի շարժման տեսության վերաբերյալ հայերեն թարգմանության մեջ առկա սխալը, որը մանրամասնորեն քննարկված է հետևյալ գրքում. Շիրինյան, Քրիստոնեական վարդապետություն անտիկ և հելլենիստական տարրերը, էջ 156-157:

զանց բառացի, թույլ են տալիս պատկերացում կազմելու տեքստի վիճակի մասին այն ժամանակում, երբ կատարվել է թարգմանությունը:

Հունարան թարգմանությունների վերոնշված արժանիքներին հարկ է ավելացնել ևս մեկը. այդ դպրոցի բառացի մեթոդի շնորհիվ է, որ մեզ են հասել քիչ հետազոտված, երբեմն էլ դժվար մեկնելի եզրերը: Եթե դրանք թարգմանվեին ոչ թե նշված մեթոդով, այլ ավելի ազատ և նկարագրական ձևով, հազիվ թե հնարավոր լիներ հայտնաբերել, թե որ հունարեն եզրերի համարժեքներն են դրանք (մյուս կողմից, իհարկե, դրանց իմաստն ավելի հստակ կլիներ):

Հունարան դպրոցի գործունեությունն անչափ արժեքավոր է և նշանակալի ոչ միայն հայկական, այլև հունական մատենագրության համար: Մեծ և նշանակալի է նաև այդ թարգմանությունների դերը երկու ժողովուրդների պատմագիտական և մշակութային աղերսներն ուսումնասիրելու գործում:

Ուստի, անտեղի են Հունարան դպրոցին տրված որոշ որակումներ. օրինակ, այդ դպրոցի գործունեությունը «ցեխադարյան¹», կամ այդ թարգմանությունները «ստրկական, մեխանիկական²» անվանելը, քանզի հենց բառացիությունն է, որ լայն հնարավորություններ են ընձեռում այս կամ այն կորած երկր կամ պատճենված եզրը քննարկելու և ճիշտ ընկալելու համար:

Այսպիսով, կարելի է եզրահանգել՝ ասելով, որ հունարենից ու ասորերենից կատարված բազմազան թարգմանությունները հարստացրեցին հայոց պատմագրությունն ու գրականությունը և պահպանեցին մի շարք երկեր, որոնց բնագրերը գտնված չեն ցայսօր (դրանց մասին տեղյակ ենք միայն այդ թարգմանությունների միջոցով): Ավելին, հայկական աղբյուրները պարունակում են այնպիսի գաղափարներ, եզրեր, հայեցակետեր, որոնք վերաբերում են մեծավ մասամբ աստվածաբանության փիլիսոփայությանը և, կարծես, ստեղծվել են քրիստոնեական գաղափարախոսության ձևավորման շրջանում ու պահպանվել են բացառաբար արևելյան եկեղեցիների դավանաբանական հայացքների տարբերությունների շնորհիվ:

¹ **Յ. Մանանդեան**, Յունարան դպրոցը..., էջ 11:

² **Lafontaine, Coulie**, 1983, p. 137.

*Բանալի բառեր՝ Հունարան դպրոց, բառացի թարգմանություն, մեկնողա-
թարգմանչական գործունեություն, պատճենումներ, նորարանություններ,
եղյակ և քառյակ գիրություններ, Դավիթ Անհաղթ, ուսումնական ձեռնարկ-
ներ, քննական բնագիր, աղծաբոված հարվածներ*

ГРЕКОФИЛЬСКАЯ ШКОЛА

Эрна Манеа Ширинян

*Ключевые слова: Грекофильская школа, дословный перевод, пере-
водческо-комментаторская деятельность, кальки, неологизмы, тривиум
и квадравиум, Давид Непобедимый, учебники, критическое издание,
контаминированные отрывки*

Под условным названием «Грекофильская школа» принято понимать дея-
тельность авторов в Армении, начиная с 5-го в., занимавшихся весьма букваль-
ными переводами с греческого. Этот метод дословного перевода или мате-
риального воспроизведения текста предполагал калькирование не только слож-
ных слов, но и порядка слов в предложении и даже некоторых синтаксических
оборотов. В результате были созданы зачастую искусственные неологизмы, не
способствующие пониманию текста. В то же время, именно благодаря этому ме-
тоду многие технические термины в богословии, философии, грамматике, рито-
рике, естествознании и т. д. стали доступны на армянском языке. Грекофиль-
ская школа была призвана осуществить трудную задачу: дабы сохранить хрис-
тианство в Армении и суметь противостоять конфессиональным спорам, пере-
нести на армянскую почву веками опробованные достижения греческой науки.

Создание Грекофильской школы тесно связано с именем Давида Анахта,
которому в основном и приписываются, дошедшие до нас с этого времени
переводы и комментарии с греческого. Почти все они были составлены для
образовательных целей и являлись учебниками и пособиями на протяжении ве-
ков. Среди них есть много переводов, оригиналы которых либо не сохранились,
либо дошли до нас в искаженном состоянии. В этих случаях роль переводов на
армянском языке возрастает еще больше, и они часто становятся незаменимым
источником при публикации критического издания греческого оригинала.

HELLENIZING SCHOOL

Erna Manea Shirinian

Keywords: *Hellenizing school, literal translation, commentary and translation activities, calques, neologisms, trivium and quadrivium sciences, David the Invincible, textbooks, critical edition, contaminated passages*

The activities of authors in Armenia who use to create very literal translations from Greek starting from the 5th century onwards is designated by the provisional name “Hellenizing school”. Thanks to the method of *verbum e verbo* translation or material reproduction were copied not only complex words but also the order of words in the sentence and even some syntactic features of Greek. As a result, there appeared many neologisms, which often were too artificial, creating barriers for proper understanding of the text. At the same time, due to this method a lot of technical terms in theology, philosophy, grammar, rhetoric, natural sciences etc. were produced and became available in Armenian. Hellenizing school was carrying out a difficult task, that is: to transfer to Armenia the advanced data of Greek science that have passed through the ages, in order to preserve Christianity here and to be able to resist confessional controversies.

The formation of the Hellenizing school is closely connected with the name of David the Invincible, to whom are mainly attributed almost all Greek hellenizing translations and commentaries that have reached us from that time. Practically all of them have been compiled for educational purposes and served as a textbooks and manuals for centuries. Among the Hellenizing writings there are many translations, the originals of which either have not been preserved or have reached us in a contaminated condition. In these cases, the role of Armenian translations increases even more, and they often become an indispensable witness while publishing the critical edition of the Greek original.